

«ԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ
13.12.2011 Թ. «ՉԵՆ ՇՏԱՊՈՒՄ»
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Օրաթերթից տեղեկանում ենք, թե իբր ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղար Հերմինե Հարությունյանի խոսքերով՝ «Հայաստանի խորհրդարանական ընտրությունները դիտարկելու հրավեր ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ին ուղարկելու է ԿԸՀ-ն...»:

Օրաթերթի՝ խոսքը համատեքստից հանելու ընդունված ավանդույթը կարելի էր անտեսել, եթե այն ընթերցողի մոտ հնարավոր թյուրընկալման տեղիք չտար և սխալ վերլուծության առիթ չհանդիսանար:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղար Հերմինե Հարությունյանը, օրաթերթի լրագրողի հարցադրմանն ի պատասխան, ներկայացրել է դիտորդական առաքելության իրավունքին վերաբերող ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածը, որի համաձայն դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

- 1) Հանրապետության Նախագահը.
- 2) Ազգային ժողովի նախագահը.
- 3) վարչապետը.
- 4) կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ԿԸՀ մամլո ծառայություն